Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

26.364

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԵՐԸ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉ.
ՄՈՍԿՎԱ
1931

334·6
Շ-85

15.07.2013
26364
334.6
Շ-85
05 JAN 2010
631/1:32

Ի. ՇՈՒԼՊԻՆ

Հաշ. 270

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԵՐ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉ.
ՄՈՍԿՎԱ 1931

Թարգմ. Ն. Տ.-Ի.

43299.63

Главлит № А-89.177 Заказ № 628 Тираж 5.000
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва, Шлюзовая набережная, 10.

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՍԱՆՔ ԴԵՊԻ ԿՈԼԽՈՍԶՆԵՐԸ

1930 թվականին մեր Խորհրդային յերկրի գյուղացիական տնտեսությունների մոտ մի քառորդը անցել է կոլխոզները։ Համոզվելով վերջնականապես անհատական տնտեսության անելանելիության և նրա անվերջ կարիքների մեջ, համոզվելով նաև, որ կոլեկտիվ տնտեսության մեջ կարելի յե ապրել ավելի լավ,—չքավորները և միջակների հիմնական մասսան ականջ դրեցին մեր կուսակցության և կառավարության ձայնին և անցան նոր ուղին, տնտեսությունը համայնորեն վարելու ուղին։

1930 թվին աշխատել են ավելի քան իննսուն հազար կոլխոզներ, որոնք միացրել են մոտ հինգ և կես միլիոն չքավոր-միջակ տնտեսություններ։ Կոլխոզներից դուրս գըտնվող մենատնտեսավարները դիտում էին կոլխոզի կյանքը, փորձում էին, ինչպես ասում են՝ իրենց «ատամներին էին խփում», տեսնում էին, թե ինչպես կոլխոզնիկները աշխատում են մեծ կոլխոզային ընտանիքով, համերաշխ, ծուլացողներ չկան, գործը լավ է գնում և արդյունքն էլ ավելի յե։ Ճիշտ է, լինում են սխալներ առանձին կոլխոզների աշխատանքի մեջ, բայց մենատնտեսավարները շատ լավ հասկանում են, որ մի տարվա մեջ դժվար է կազմակերպել մեծ տնտեսություն առանց սխալների։

Նրանք տեսնում են, թե ինչպես Խորհրդային իշխանության ակտիվ ոգնությամբ, կուլակության դեմ գրոհելով և վոչնչացնելով այն, այդ կոլխոզները աճում են նրանց աչքի առաջ։

Կասկածները փարատվեցին, կուլակային բամբասանքները ողը ցնդեցին և նրա հետևանքը յեղավ այն, որ կոլխոզային տարին նախապատրաստեց մենատնտեսավարին կոլխոզ մտնելու համար։

Ահա թե ինչու, սկսած 1930 թվի սեպտեմբերից, մենք ունենք մասսայական մի նոր, շարունակ ուռճացող կոլխոզային հոսանք։ Այդ հոսանքի սկզբից մինչև այս տարվա հունվարի 10-ը կազմակերպվել են ավելի քան 20 հազար նոր կոլխոզներ, հին և նոր կոլխոզներն են մտել մինչև մեկ ու կես միլիոն չքավոր և միջակ մենատնտեսավարներ։

Այժմ դժվար է ճարել այնպիսի մենատնտեսավարի, որը հրաժարվի կոլխոզ մտնելուց։ Նա կասի այժմ՝ «յես մտնում եմ կոլխոզ», կամ՝ «մինչև գարուն կոպասեմ», կամ՝ «մի որ ժամանակ տվեք ինձ մտածելու»։

Կուսակցությունն ու կառավարությունը նպատակ են դրել կոլեկտիվացնել 1931 թ. Խորհրդային Միության գյուղացիական տնտեսությունների կեսից վոչ պակասը։

Այդ չի նշանակում, վոր պետք է հանգիստ նստել և սպասել, վոր գյուղացիական տնտեսությունների այդ 50 տոկոսը իրենք իրենց կգան ու կմտնեն կոլխոզները։ Ինքնահոս կոլեկտիվացման այդ տեսակետը ոգնում է կուլակին նրա պայքարի մեջ կոլխոզի դեմ և նրանք, վորոնք իրենց հույսը դնում են դրա վրա, բացարձակ ոպորտունիստներ են։

Զքավորները և մանավանդ միջակները սնվել-մեծացել են անհատական տնտեսության մեջ։ Չնայած կոլխոզների աշկարա առավելություններին, նրանց այնուամենայնիվ վախեցնում է սեփականությունից բաժանվելու միտքը՝ «այդ ինչպես յեղավ, առաջ իմս եր, հիմա մերն է — ընդհանուրին է»։ Նրանց համար կոլեկտիվացման մի շարք հարցեր դեռևս պարզված չեն, կասկած են առաջացնում մանավանդ այն ժամանակ, յերբ գյուղում կոլխոզ չկա, իսկ հարևան կոլխոզի աշխատանքին միշտ ել հնարավոր չի լինում ծանոթանալու։ Ավելացրեք և այն, վոր կուլակը չհամարձակվելով շեշտակի ժխտել կոլխոզը, վորովհետև գիտե, վոր վոչ վոք իրեն չի հավատալու այդ բանում, ամեն տեսակ սուտ ու ղորթ միջոցներով աշխատում է վարկաբեկել կոլխոզը, վորոնել ու գտնել զանազան զանցառություններ, սխալներ, պակասություններ, «լուն ուղտ» դարձնել։ Այս բոլորը դժվարացնում են մենատնտեսավարի կոլխոզ մտնելը։

Բայց առաջ են յեկել հարյուրավոր, հազարավոր, տասնյակ հազարավոր նոր կոլխոզնիկներ, վորոնք դեռևս կոլխոզ չեն մտել, բայց արդեն մտնում են կոլխոզ և այնտեղ, վորտեղ չկա կոլխոզ, վճռում են պայքարել նրա կազմակերպման համար։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲԸ

Յեվ ահա այն գյուղում, վորտեղ կոլխոզ չկա, վորտեղ կուլակային ագիտացիայի համար ավելի շատ հարմարություններ կան, վորտեղ մենատնտեսավարները ավելի շատ կասկածներ ունեն, — հայտնվում է տնտեսությունների առաջին խումբը, վորը հայտարարում է բարձրաձայն, վոր ուզում է կոլխոզ մտնել կամ կոլխոզ կազմակերպել։ Սա հենց ինքը, նախաձեռնող խումբն է։

Դա նշանակում է, վոր նախաձեռնող խումբը կազմվում է այն մենատնտեսավարներից, վորոնք վճռել են կոլխոզ մտնել, նոր կոլխոզ կազմակերպել և ներգրավել մնացած մենատնտեսավարներին նոր ստեղծվող կոլխոզի մեջ։

Նախաձեռնող խումբը վոչ վոքից չի ընտրվում կամ նշանակվում։ Նա կազմակերպվում է կամ իրենց՝ մենատնտեսավարների նախաձեռնությամբ, վորոնք վորոշել են կոլխոզ մտնել, կամ մի վորևե հասարակական կազմակերպության կամ հարևան կոլխոզի նախաձեռնությամբ։

Գործնականում յեղել են դեպքեր, յերբ յեկել է լիազորը գյուղխորհուրդ և հայտնել է, վոր հարկավոր է ստեղծել նախաձեռնող խումբ, իսկ գյուղխորհրդի նախագահը մատով ցույց տալով առաջին հանդիպող մենատնտեսավարին ասել է.

— Ա՛յ, Սարգիս, դու կլինես նախաձեռնող խմբում։ Դու յել, Պետրոս։

Կազմակերպվել են նախաձեռնող խմբեր գյուղական կազմակերպությունների ներկայացուցիչներից կամ միայն գյուղում ծառայողներից։ Դրանք նախաձեռնող խմբեր չեն։ Յեղել են և այնպիսի նախաձեռնող խմբեր, վորոնց մեջ մտել են միմիայն կոլ-

խոզին համակրողները։ Նրանք ազիտացիա յեն մղել, մտել են տնից տուն, իսկ յերբ նրանց հարցրել են — «իսկ ինքներդ մտնո՞ւմ եք կոլխոզ», — նրանք ընկել են անհարմար դրության մեջ և շփոթված պատասխանել են.

— Գիտե՞ք ինչ... մենք դեռևս չենք վճռել այդ հարցը... մտադիր ենք մտնելու... մենք դեմ չենք... ինչպես ժողովուրդը, այնպես ել մենք...

Դա յել նախաձեռնող խումբ չե։

Յեթե մենք ասում ենք, վոր նախաձեռնող խումբը ծնվում է այն մենատնտեսավարներից, վորոնք վճռել են կոլխոզ մտնել, դա ամենևին չի նշանակում, վոր տեղական կոմբջիջը, գյուղխորհուրդը, խրճիթ-ընթերցարանը, հարևան գյուղի կոլխոզը չպետք է կազմակերպեն այդ տեսակ խմբեր։ Ընդհակառակը, դա նրանց անմիջական պարտականությունն է։

Հաճախ գյուղում կան մարդիկ, վորոնք վճռել են կամ վճռում են կոլխոզ մտնել։

Կան կոլխոզի կողմնակից ընկերներ։ Բայց նրանց տարակուսանքի մեջ է գցում այս կամ այն հարցը, կամ այդ հարցի խրթին, մութ լինելը։ Բավական է բացատրել նրանց այդ բոլորը և ահա նրանք անցնում են կոլխոզնիկների շարքերը։

Բայց նրանք ցրված են, կազմակերպված չեն։ Կոմբջիջի, գյուղխորհրդի, հարևան կոլխոզի, խրճիթ-ընթերցարանի պարտականությունն է ոգնել նրանց կազմակերպվելու և նախաձեռնող խումբ դառնալու համար, և ղեկավարել նրանց։

Յեթե նրանք այդ չեն անի, հույսները կդնեն նախաձեռնող խմբերի ինքնուվի աճման վրա, այդ դեպքում նրանք կդառնան նույնպիսի ոպորտունիստներ, ինչպես և այն դեպքում, յերբ նրանք իրենց հույսը դնում են այն բանի վրա, վոր մենատնտեսավարները ինքնահոս կերպով կոլխոզ կմտնեն։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻ ՈՐԻՆԱԿ

Նախաձեռնող խումբ կազմակերպելու մասին մի ընկեր հետևյալն է գրում մեզ.

— Իմ արած զեկուցումից և ընդարձակ զրույցից հետո յես ուղղակի հարց դրի. «Ամեն ինչի մասին խոսեցինք այստեղ. այժմ յեկեք նախաձեռնող խումբ կազմակերպենք». Սկզբում բոլորը լուռ եյին, տիրում եր ճնշող լռություն, գյուղացիները շուռ ու մուռ եյին գալիս իրենց տեղերում, բայց ակտիվիստ Պողոս Արամյանի ամուր ձայնը բոլորին ցնցեց.

— Առաջինը ինձ գրիր, — հայտնեց նա և մի քիչ լռելուց հետո գոչեց. — Ցղերք, գրվեցեք։

Լսվեցին նույնատեսակ հաստատուն հայտարարություններ մյուս մենատնտեսավարների կողմից ևս։ Վայրկյանական լռությունից հետո նորից՝ «ինձ եվ գրեցեք»։ Այդ «ինձ եվ գրեցեք»-ը գործում եր հրացանի հարվածի ազդեցություն անհատական դարավոր տնտեսության ամրոցի մեջ։ 9 տնտեսություն գրվեցին։ Դրանք առաջին հերոսներն եյին, առաջին թնդանոթները, վորոնք ճեղքում-պատռում եյին անհատական տնտեսությունների պատը։

— Հետո, յերբ բոլորը ցրվեցին, — շարունակում է իր նամակի մեջ ընկերը, — մնացինք յես և նախաձեռնող խումբը։ Քննեցինք և նախագծեցինք աշխատանքի պլանը։ Ընտրեցինք նախաձեռնող խմբի նախագահ, վորին պարտավորեցրինք կապ հաստատել հարևան գյուղի կոլխոզի և կոմբինատի հետ։

Պայմանավորվեցինք աշխատել այս ձևով. բոլոր գյուղացիներից ժողով կազմելը նախաձեռնող խմբի ուժից վեր եր։

— Նրանք շատվոր են, իսկ մենք՝ քիչ, կուտեն մեզ, բոլոր հարցերին հարկավոր պատասխաններ տալ չենք կարող, — յերկյուղ հայտնեցին ընկերները։

Վճռեցին հետևյալ որը կազմել ցուցակը այն գյուղացիների, որոնք ուզում են կոլխոզ մտնել, բայց վճռականություն չունեն։ Դրանցից մի հինգ հոգու հրավիրել նախաձեռնող խմբի նախագահի խրճիթը կոլխոզ գրելու համար։ Նախաձեռնող խմբի անդամները այսպես եյին դատում.

— Յեթե ընդհանուր ժողովում նրանք շատ են, իսկ մենք քիչ, այստեղ մեծամասնություն կկազմենք և հեշտությամբ կարող ենք համոզել տատանվող ընկերներին։ Թող բոլորն ել չուզենան կոլխոզ մտնել, այլ միայն յերկու հոգի,—այդ ել լավ կլինի։ Հետևյալ որը կհրավիրենք համակրողների մի ուրիշ խումբ և կգրավենք նրանց կոլխոզ։

Ահա կոլխոզ գրավելու այդ խըմբական մեթոդը նախաձեռնող խումբը դարձրեց իր աշխատանքի հիմքը։ Բացի դրանցից, վճռեցին կոլխոզ գրավել առանձին-առանձին իրենց հարևաններին և մոտիկ

մարդկանց։ Գյուղում կան մի քանի չքավորներ և միջակներ, որոնք մեծ հեղինակություն ունեն և նրանց յետևից կոլխոզ կգնան ուրիշները ևս։ Նախաձեռնող խումբը վորոշում ե դարձնել այդպիսիներին իր առանձին ուշադրության առարկան։

Դիմեցին կոմբջիջին և հարևան գյուղի կոլխոզին և խնդրեցին կապել իրենց խմբին քաղաքականապես ուժեղ և լավ պատրաստված մի ընկերոջ, որի հետ միասին նախաձեռնող խումբը կկարողանա կազմակերպել ընդհանուր ժողովներ, կանանց ժողովներ և այլն։

Հեռանալիս յես նախագուշացրի նոր կոլխոզնիկներին, որ հենց վաղվանից կուլակները սկսելու յեն կեղտ գցել նրանց վրա, անվանարկել, բամբասել, տարածել ամեն տեսակ լուրեր, որպեսզի վոչնչացնեն նախաձեռնող խմբի հեղինակությունը և գործը քայքայեն։ Յեվ հիրավի, այդպես ել յեղավ։ Հենց հետևյալ որը կուլակները նախաձեռ-

նող խմբի ընկերներից ամեն մեկին մի անուն կպցրին։

Կուլակների ասելով՝ մեկը նրանցից «ծույլ» եր, մյուսը՝ «ուզում եր տաք պաշտոն ստանալ», յերրորդը՝ «իշխանության հաճությունն ե ուզում ստանալ» և այլն։

Ահա ձեզ նախաձեռնող խմբի կազմակերպության մի որինակ։ Ի հարկե, պարտադիր չե, վոր նախաձեռնող խումբը կազմակերպվի ընդհանուր ժողովում։ Կարող ե այսպես ել լինել. հավաքվում են խրճիթ-ընթերցարանում կամ գյուղխորհրդում մենատնտեսավարները լրագիր կարդալու, խոսում են կոլխոզի մասին, խորհուրդ են անում խրճիթի վարիչի հետ և կազմակերպում են նախաձեռնող խումբ։ Կամ կոմբջիջը իմանալով, թե գյուղում մենատնտեսավարներից ովքեր են ուզում կոլխոզ մտնել, հրավիրում ե նրանց և նույնպես նախաձեռնող խումբ կազմակերպում։

ՎՈՐՏԵՂ Ե ՍՏԵՂԾՎՈՒՄ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲԸ

Նախաձեռնող խումբը, վորպես կանոն, կազմակերպվում ե այն գյուղում, վորտեղ կոլխոզ չկա՝ նոր կոլխոզ ստեղծելու համար։

Այն գյուղում, վորտեղ կոլխոզ կա, մենատնտեսավարը կարող ե ուղղակի մտնել այդ կոլխոզը և վոչ թե ստեղծել նախաձեռնող խումբ՝ նոր կոլխոզ կազմակերպելու համար։

Ճիշտ ե, լինում են այնպիսի պայմաններ, յերբ, որինակ, գյուղը լայնատարած ե, բաժանված ե գետով յերկու մասի, այնտեղ կա յերկու հողային ընկերություն և այլն, և կարիք ե զգացվում այնտեղ յերկրորդ կոլխոզի։ Այդ դեպքում կարող ե առաջ գալ կարիք՝ ստեղծելու նախաձեռնող խումբ նոր կոլխոզ կազմակերպելու համար։

Մի քանի կոլխոզներ չեն կարողացել [illegible] ցած ամառվա մեջ հաջող աշխատել, [illegible] են կազմակերպել աշխատանքը, անկանոն

43299-63
ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ ... ՍՍՌ
Ա. Մ. Մ. Մ. Մ. Մ. Մ. Մ.
Туркменская Государственная Библиотека

կերպով են բաժանել բերքը, իսկ կոլխոզից դուրս մնացած մենատնտեսավարների մեջ ձգտումն է հղացել սեփական, ավելի լավ կոլխոզ։ Ի՞նչ պիտի անել այդ դեպքում։

Անպայման ավելի լավ կլինի, եթե մնացած մենատնտեսավարները միանան թույլ կոլխոզին և ուղղեն նրա թերությունները։ Կոմբջիջը, գյուղխորհուրդը կոգնեն կոլխոզնիկներին այդ պակասավոր կոլխոզը կարգի գցելու գործում։

Բայց եթե չքավորները և միջակները չեն ցանկանա մտնել այդ հին կոլխոզը, այդ դեպքում հարկավոր է ոգնել նրանց՝ կազմակերպելու նոր կոլխոզ, ստեղծելով նախաձեռնող խումբ՝ այդ գործը գլուխ բերելու և ձևակերպելու համար։

Պետք է հաշվի առնել, որ կուլակը, սովորեցնելով մենատնտեսավարներին մանր կոլխոզներ կազմակերպել, շատ լավ հասկանում է, որ որչափ բաժան-բաժան լինեն ուժերը, այնքան ավելի քիչ կարտադրեն

նրանք և ուրեմն ավելի հեշտ կլինի քայքայել նրանց։

Հին կոլխոզներում չքավորները դեռևս հանդիսանում են գլխավոր մասսան և կուլակը շշնջում է միջակ-մենատնտեսավարների ականջին, որ նրանք կազմակերպեն իրենց առանձին կոլխոզը, այսպիսով միջակին հանելով չքավորի դեմ։ Բայց կուլակային այդ թակարդի մեջ չպետք է ընկնել։

Ի՞ՆՉՊԵՍ Է ԱՇԽԱՏՈՒՄ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲԸ

Նախաձեռնող խմբի հիմնական աշխատանքը պիտի կայանա գյուղացիներին անհատապես կամ խմբովին կոլխոզ գրավելու մեջ։

Մտնել մենատնտեսավարի մոտ յերեկոյան «մի բաժակ թեյի», պատմել նրան կոլխոզային կարգերի մասին։

Հավաքել 4—5 մերատնտեսավարների և ամբողջ յերեկոն զրուցել նրանց հետ։

Աչքից չթողնել, — ինչպես պատմում էր իր նամակի մեջ մեր հիշած ընկերը, — այն չքավորներին և միջակներին, վորոնք գյուղում հեղինակություն ունեն և առաջին հերթին նրանց գրավել կոլխոզ։

Կազմակերպել իրենց կանանց և ուղարկել նրանց ագիտացիա մղելու կոլխոզի համար կին-մենատնտեսավարների (մանավանդ այրիների) մեջ։ Կազմակերպել մենատնտեսավարներից շրջագայություն (եքսկուրսիա) դեպի հարևան կոլխոզը՝ նրա կյանքին և աշխատանքին ծանոթանալու համար։

Պայմանավորվել հարևան գյուղի կոլխոզի հետ, վոր նա հաշիվ տա իր աշխատանքի և այդ աշխատանքի արդյունքների մասին և ապահովել այդ հաշվետվությունը գյուղացիների հարյուր տոկոս ներկայությամբ։

Ոգտագործել գյուղացիների մասսայական հավաքույթները — խրճիթ-ընթերցարանը, գյուղխորհուրդը, կոոպերացիայի խանութը, մենատնտեսավարների խրճիթները, գյուղական յերեկույթները — կոլխոզ գրավելու համար։

Պարտավորեցնել, վոր նախաձեռնող խմբի յուրաքանչյուր անդամ կոլխոզ գրավի մի ամբողջ խումբ կա։

Ծավալել մասսայական աշխատանքների բոլոր տեսակներն ու ձևերը։ Դրանք են ահա նախաձեռնող խմբի աշխատանքի յեղանակները մենատնտեսարարներին կոլխոզ գրավելու գործում։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուրիշներին գրավելուց առաջ նախաձեռնող խումբը ինքը պետք է լավ պատրաստված լինի։ Նա պետք է մշակի ու յուրացնի Կենտկոմի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան պլենումի վորոշումները և կառավարության վորոշումը հնգամյակի յերրորդ, վճռական տարվա պլանային առաջադրությունների մասին, մանրամասնորեն ծանոթանա կոլ-

խոզի կանոնադրությանը, այցելի հարևան կոլխոզները և ուսումնասիրի նրանց աշխատանքը, աշխատանքի կազմակերպությունը, բերքի բաշխումը։

Յերբ նախաձեռնող խումբը գա մենատնտեսավարների մոտ կամ ժողովե նրանց, ամենից առաջ նրան հարցնելու յեն. ինչն ե հանրայնացվում, ինչպես ե կազմակերպվում աշխատանքը կոլխոզում, ինչպես են բաժանվում արդյունքները, ինչ ոգնություն ե հասցնում և ինչպիսի ուշադրություն ե դարձնում մեր կառավարությունը կոլխոզային շարժմանը։

Նախաձեռնող խմբի աշխատանքը ավելի կհեշտանա, յեթե նա պայմանավորվի հարևան կոլխոզի վարչության հետ, վորպեսզի վերջինս ընտրի և իր գրավող բրիգադներից մեկը ամրացնի նրանց, իսկ այդ բրիգադը պիտի կազմված լինի լավագույն կոլխոզնիկներից։ Այդ կոլխոզնիկները գիտեն կոլխոզային կյանքի բոլոր մանրամասնություն-

ները և, աշխատելով մշտապես նախաձեռնող խմբի հետ, մեծ ոգնություն կարող են հասցնել։

Այսպես ուրեմն նախաձեռնող խմբի աշխատանքի հիմնական բովանդակությունը կայանում ե նրանում, վոր նա պարզի մենատնտեսավարին կուսակցության և կառավարության քաղաքականությունը կոլեկտիվացման շրջանում, ծանոթացնի նրան կոլխոզի կանոնադրությանը և հարևան կոլխոզների գործնական կյանքին։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲԸ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախաձեռնող խմբի աշխատանքը միայն այն ժամանակ կունենա լավ արդյունք, յերբ այդ աշխատանքը տարվում ե տեղական կուսակցական, խորհրդային կազմակերպությունների և կոլխոզի ղեկավարու-

թյամբ, յերբ վերջիններս շարունակ ուշադրության կառնեն նախաձեռնող խմբի ղեկուցումները և կհրահանգեն, թե ինչ և ինչպես պետք է անել։ Մի մշտական ղեկավարի կկապեն նախաձեռնող խմբին, գրավող խումբ կստեղծեն միատեղ աշխատանքի համար, կկազմակերպեն ռայոնական և մարզային հավաքներ նախաձեռնող խմբերի, վորտեղ կբացատրեն նրանց խնդիրներն ու պարտականությունները և փորձերի փոխանակություն կանեն։ Նախաձեռնող խմբերի շուրջը կստեղծեն հասարակական ուշադրություն, մերկացնելով կուլակների գրպարտությունները նախաձեռնող խմբի ընկերների դեմ։

Դրա համար ել յուրաքանչյուր նախաձեռնող խումբ պետք է կապվի գյուղի հասարակական կազմակերպությունների հետ և գործի նրանց ղեկավարությամբ։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Նախաձեռնող խումբը ըստ եյության մի փոքրիկ կոլխոզ է, վորը սակայն չունի անդամների բավարար քանակություն կանոնադրությունը հաստատելու, ձևակերպելու և ցուցակագրվելու համար։ Նախաձեռնող խմբի գլխավոր նպատակն է գրավել մենատնտեսավարներին և կոլխոզ կազմելու համար անհրաժեշտ է անդամներ ունենալ։ Յեթե նախաձեռնող խումբը չի մեծանում, ուրեմն մի արգելք կա։ Կամ նա չի աշխատում, կամ, գուցե, ներս են խցկվել կուլակը և յենթակուլակը և կամ խմբի ուժերը շատ թույլ են... Տեղական կազմակերպությունները շարունակ պիտի հետևեն նախաձեռնող խմբի աշխատանքին. յեթե հարկավոր է, պետք է ամրացնել նրանց ոգնելու համար ավելի շատ կուսակցական ընկերներ, իսկ յեթե այնտեղ բուն են դրել ցուցամոլ մարդիկ կամ

խորթ տարրեր — ազատել խումբը դրանցից։ Նախաձեռնող խմբի հենց անունը խոսում է այն մասին, որ այդ մարդիկ նախաձեռնողներ են նոր կոլխոզների համար կըռվելու գործում և կասկած չկա, որ կուլակը ուզղելու յե նրանց դեմ իր ամբողջ չարությունը, կանգ չառնելով վոչ մի միջոցի առաջ։ Լինելու յեն սպառնալիքներ։

Մյուս կողմից, կուլակը փորձելու յե խցկվել նախաձեռնող խմբի մեջ, վորպեսզի քայքայի այն։ Կուլակը միշտ ել ինքը չի անում այդ բանը, այլ հաճախ ուղարկում է այնտեղ այնպիսի մարդկանց, վորոնք գիտակցորեն շարունակ տանում են կուլակային քաղաքականություն։

Յեվ ահա կուլակին և յենթակուլակին իր մեջ չթողնելը նախաձեռնող խմբի անելիքներից մեկն է։

Սովորաբար կոլխոզ են գնում առաջին հերթին բատրակներն ու չքավորները և դրանցից ել առաջին հերթին պիտի կազմ-

վեն նախաձեռնող խմբերը։ Բայց ակտիվիստ միջակն ել չքավորի հետ միասին անցնում են կոլխոզնիկների առաջին շարքերը։ Այսպիսով նախաձեռնող խումբը կազմվում է բատրակներից, չքավորներից և ակտիվիստ միջակներից։

ԾՌՈՒՄՆԵՐ ԶՊԵՏՔ Է ԹՈՒՅԼ ՏԱԼ

Նախաձեռնող խումբը պետք է կռվի կուլակի դեմ, կռվի ամեն մի մանատնտեսավարի համար, բայց իր աշխատանքը կոլխոզ գրավելու գործում նա պետք է կառուցանի բացառապես հոժարակամության սկզբունքի վրա։ Պետք է կարողանալ համառությամբ գործել և նպատակին հասնել։ Ցեթե ամբողջ գործը այնպես գնար, որ կարելի լիներ գալ Հակոբի մոտ և ասել. «դե, Հակոբ, գնանք կոլխոզ, ժամանակն է» և նա յել պատասխաներ. «յես դեմ չեմ, լավ, գրիր», — յեթե, ասում ենք, այսպես լիներ, այն ժա-

մանակ իսկի նախաձեռնող խմբի կարիք էլ չեր լինի։ Իսկապես, ինչ կարիք կա նախաձեռնող խումբ ստեղծելու, յերբ կարելի յե գումարել ընդհանուր ժողով, պատմել կոլխոզի մասին և բոլորն էլ հենց տեղնուտեղը կդրվեն կոլխոզ։ Բայց միշտ այդպես չի լինում։

Նախաձեռնող խումբը կազմվում է գլխավորապես նրա համար, վոր համառությամբ բացատրվի մենատնտեսավարին կոլխոզ գնալու անհրաժեշտությունը, նրա բոլոր կասկածներն ու տարակուսանքները և կուլակի հնարած ու տարածած ստահոդ լուրերը։

Բայց մարդկանց կոլխոզ գրավելու աշխատանքի տաք ժամանակը հարկավոր է աշալուրջ լինել և չկրկնել անցյալ տարվա գարնան ծռումները, յերբ մի շարք վայրերում հոժարակամությունից անցել եյին պարտադիր ձևով կոլխոզ մտցնելուն։ Դա շատ սայթաքուն ուղի յե։ Յեթե այս կամ այն չքավորը կամ միջակը չի գնում կոլխոզ չնայած ուժեղ ագիտացիային, նախաձեռնող

խմբի մտքով կարող է պատահել անցնի նրան վորևե բանով վախեցնելու գաղափարը, վորպեսզի ստիպի նրան կոլխոզ մտնելու։ Սկզբում գուցե ասի, վոր «վոչ-կոլխոզնիկներին սեզոնային աշխատանքների չեն ընդունում», ապա՝ «կոոպերացիայում քեզ վոչինչ չեն տա», հետո միջակին ունևորների շարքը կդասի և կտա նրան խիստ առաջադրություններ, իսկ այնուհետև արդեն գուցե և ասի — «քիչ կուղարկեն կոճղեր քանդելու»։

Խուսափել այդ հիմարություններից, չկրկնել «ձախ» ծռումները, համառությամբ ձգտել մասսայական աշխատանքի, կուլակության և ոպորտունիզմի դեմ կռվելու միջոցներով ու ճանապարհով ներգրավել չքավորին և միջակին կոլխոզ, — ահա թե ինչ պետք է անել։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻՑ ԴԵՊԻ ԿՈԼԽՈԶ

Նախաձեռնող խումբը մեծանում է մինչև մի վորոշ քանակություն։ Որինակ, Կոզլովի ռայոնում (Սեահող շրջան) սահմանված եր, վոր յերբ նախաձեռնող խմբի տնտեսու-

թյունների թիվը հասնում եր 15-ի, նրանք կազմակերպում են կոլխոզ։ Դրա համար նրանք կազմում են նախաձեռնող խմբի անդամների ընդհանուր ժողով, վերջնականապես վերամշակում և ընդունում են կոլխոզի կանոնադրությունը, ընտրում են վարչություն, վերստուգիչ հանձնաժողով (վոչ պակաս 5 հոգուց) կանոնադրությունը ստորագրելու համար։ Ստորագրված կանոնադրությունը հենց հետևյալ որը ուղարկում են վավերացնելու։

Վարչությունը ընտրելուց և կանոնադրությունը հաստատելուց հետո կոլխոզի վարչությունը անմիջապես դիմում է տնտեսական գործունեությանը (հավաք, սերմերի տեսակավորումն ու գտումը, ինվենտարի համայնացումը և նորոգությունը, քանող անասունների հանրայնացումը, այլ և հանրայնացումը այն ամենի, ինչ վոր նախատեսված է կանոնադրության մեջ)։ Բացի դրանից, վարչությունն ամբողջովին

իր վրա յե առնում նախաձեռնող խմբի պարտականությունները մնացած մենատնտեսավարներին կոլխոզ գրավելու գործում և քաշում է այդ աշխատանքի մեջ կոլխոզնիկների ամբողջ մասսան։

Այնուհետև, յերբ նախաձեռնող խումբը կոլխոզ է դառնում, նրա յուրաքանչյուր անդամի անելիքը չի վերջանում, այլ, ըստ եությանն, նոր է սկսվում։ Կոլխոզ գրավելը աշխատանքի մի մասն է և այն ել վոչ ամենադժվարը։ Կոլխոզը ձևակերպելիս առաջ է գալիս նոր և գլխավոր խնդիրը — ստեղծել կոլեկտիվ տնտեսություն արտադրության և աշխատանքի կանոնավոր կազմակերպությամբ։ Ցեվ նախաձեռնող խմբի ընկերը, յեթե նա իսկապես նախաձեռնող է յեղել կոլխոզի կազմակերպման մեջ, պիտի դառնա նոր կոլխոզի վողնաշարը, նրա ակտիվ անդամի իրավունքներով։

Ղեկավարող կազմակերպություններն այնպես պետք է անեն, վոր նախաձեռնող խմբի

անդամները անցնեն նոր կոլխոզի գլուխը։

Վարչությունը պետք է առաջին հերթին ուղարկի նախաձեռնող խմբում գտնված՝ իսկ այժմ ակտիվ դարձած կոլխոզնիկ ընկերներին կոլխոզային կուրսերը։

Յեթե մենք ծավալենք լիուլի մասսայական աշխատանքը, միաժամանակ անողոք կռիվ մղելով կուլակների և նրանց սպասավորողների — աջ և «ձախ» ոպորտունիստների դեմ, յեթե իրենք՝ ակտիվիստ-մենատնտեսավարները, վորոնք վճռել են կոլխոզ մտնել նախաձեռնող խմբերի միջոցով, իրենց վրա վերցնեն չքավորներին և միջակներին կոլխոզ գրավելու գործը, — այն ժամանակ կուսակցության և կառավարության դրած խնդիր, — 1931 թ. կոլեկտիվացնել ԽՍՀՄ գյուղացիական տնտեսությունների կեսից վոչ պակասը, — կիրագործվի։

Гос. Библиотека ՀՍՍՌ ССР им. А. Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Մասսայական նոր հոսանք դեպի կոլխոզները . . . 3
Նախաձեռնող խումբը . . . 8
Նախաձեռնող խմբի կազմակերպության մի օրինակ . . . 12
Վորտեղ է ստեղծվում նախաձեռնող խումբը . . . 17
Ինչպես է աշխատում նախաձեռնող խումբը . . . 19
Նախաձեռնող խմբի աշխատանքի բովանդակությունը . . . 21
Նախաձեռնող խումբը և հասարակական կազմակերպությունները . . . 23
Նախաձեռնող խմբի կազմը . . . 25
Ծռումներ չպետք է թույլ տալ . . . 27
Նախաձեռնող խմբից դեպի կոլխոզը . . . 29

ՀՀ Ազգային գրադարան
NL0204317

5 ԿՊԿ.

13091

Цена 5 коп.

С. Х. 2.

Ч Ф 1
ՏՄ 2

И. ШУЛЬПИН

Застрельщики коллективизации

(Об инициативных группах)
(перев. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10